

Հավելված
Հայաստանի Հանրապետության կառավարության
2006 թվականի օգոստոսի 18 -ի N 32 արձանագրային որոշման

**ԳՅՈՒՂԱՏՆՏԵՍԱԿԱՆ ԱՐՏԱԴՐԱՆՔՆԵՐԻ ԻՐԱՑՈՒՄԻՑ
ԱՎԵԼԱՑՎԱԾ ԱՐԺԵՔԻ ՀԱՐԿԻ ՎՃԱՐՄԱՆ ԿԱՆՈՆԱԿԱՐԳՄԱՆ
ՀԱՅԵՑԱԿԱՐԳ**

Բովանդակություն

Ներածություն

- 1. Հայեցակարգի նպատակը**
- 2. Հայեցակարգի խնդիրները**
- 3. Առկա իրավիճակի վերլուծությունը և կանխատեսումները**
- 4. Գյուղատնտեսության մեջ ավելացված արժեքի հարկի կանոնակարգումը**
- 5. Հայեցակարգի իրականացումից ակնկալվող արդյունքները**

Ներածություն

Շուկայական հարաբերություններին անցման գործընթացում Հայաստանի Հանրապետության տնտեսությունը բախվեց որակապես նոր խնդիրների, որոնցից կարևորագույնների թվում առանձնանում է արդյունավետ հարկային քաղաքականության իրականացումը: Վերջինս, բացի ֆիսկալ գործառույթից, կոչված է նպաստելու արտադրական ներուժի լիարժեք օգտագործմանը և գերակա ոլորտների զարգացման խթանմանը:

Հայաստանի Հանրապետության ագրարային բարեփոխումների ենթատեքստում, գյուղատնտեսության ոլորտի զարգացման շահագրգռությամբ, իրականացվում է գյուղատնտեսական գործունեությամբ զբաղված ֆիզիկական և իրավաբանական անձանց հարկման բավականին մեղմ քաղաքականություն:

Սակայն, 2003 թվականին անդամակցելով Առևտրի Համաշխարհային կազմակերպությանը, Հայաստանը ձեռք բերեց արտաքին առևտրի զարգացման նոր հնարավորություններ և ստանձնեց միջազգային առևտրի ազատականացման սկզբունքներից բխող որոշակի պարտավորություններ: Դրանցից է Հայաստանի Հանրապետության տարածքում արտադրված գյուղատնտեսական արտադրանքների իրացման նկատմամբ ավելացված արժեքի հարկի արտոնության վերացումը:

Արդեն իսկ Հայաստանի Հանրապետության Ազգային Ժողովի կողմից 2002 թվականի սեպտեմբերի 25-ին ընդունված՝ «Ավելացված արժեքի հարկի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքում փոփոխություն կատարելու մասին» Հայաստանի Հանրապետության օրենքով ուժը կորցրած է ճանաչվել ավելացված արժեքի հարկի գծով վերոհիշյալ արտոնությունը և այդ փոփոխությունն ուժի մեջ է մտնելու 2009 թվականի հունվարի 1-ից: Հանրապետության գյուղատնտեսությունում ավելացված արժեքի հարկի արտոնության վերացումը կարող է հանգեցնել մի շարք խնդիրների, որոնց արդյունավետ լուծումների կանխորոշման նպատակով մշակվել է սույն հայեցակարգը:

1. Հայեցակարգի նպատակը

Հայեցակարգի նպատակն է Առևտրի համաշխարհային կազմակերպությանը Հայաստանի անդամակցության պարտավորությունների շրջանակում արտադրողի կողմից արտադրված գյուղատնտեսական արտադրանքների իրացումից ավելացված արժեքի հարկի արտոնության վերացման գնահատումը և դրանց մեղմման ուղղությամբ հնարավոր մոտեցումների և միջոցառումների մշակումը:

2. Հայեցակարգի խնդիրները

Հայեցակարգի հիմնական խնդիրներն են.

- ա) գնահատել գյուղատնտեսության ոլորտում ավելացված արժեքի հարկի արտոնության վերացման արդյունքները և հետևանքները,
- բ) միջազգային փորձի ուսումնասիրության և հանրապետության սոցիալ-տնտեսական զարգացման քաղաքականության շրջանակներում առաջարկել գյուղատնտեսության ոլորտում ավելացված արժեքի հարկի կարգավորման կառուցակարգեր,
- գ) ներկայացնել Հայաստանի Հանրապետության կառավարության կողմից իրականացվելիք միջոցառումները:

3. Առկա իրավիճակի վերլուծությունը և կանխատեսումները

3.1. «Ավելացված արժեքի հարկի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 15-րդ հոդվածի 7-րդ կետի համաձայն՝ Հայաստանի Հանրապետության տարածքում անմիջական արտադրողների կողմից գյուղատնտեսական արտադրանքի իրացումն ազատվում է ավելացված արժեքի հարկից: Սակայն, ինչպես ավելացված արժեքի հարկից ազատված գրեթե բոլոր մատակարարումների դեպքում, գյուղատնտեսական արտադրանք արտադրողները ևս ամբողջությամբ չեն ազատվում ավելացված արժեքի հարկից, այն իմաստով, որ նրանք ավելացված արժեքի հարկ վճարում են իրենց գործունեության սպահովման համար շուկայից գնվող ներդրանքների դիմաց: Բացառություն են կազմում միայն այն ներդրանքները, որոնք, համաձայն օրենքի, ազատված են ավելացված արժեքի հարկից: Դրանց թվին են դասվում՝ անասնաբուժական դեղամիջոցները, գյուղատնտեսական արտադրանքի արտադրությունում օգտագործվող թունաքիմիկատները, պարարտանյութերը, գյուղատնտեսական մշակաբույսերի և բազմամյա տնկարկների սերմացուներն ու տնկանյութը («Ավելացված արժեքի հարկի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 15-րդ հոդվածի 6-րդ կետ): Մյուս բոլոր անհրաժեշտ ձեռքբերումների (գյուղատնտեսական տեխնիկա, վառելիք, ջուր, անասնակեր և այլն) դիմաց ավելացված արժեքի հարկ վճարվում է սահմանված ընդհանուր կարգով:

Համաձայն գործող օրենքի, եթե անձը չի իրականացնում ավելացված արժեքի հարկով հարկվող գործարքներ, ապա չի հանդիսանում ավելացված արժեքի հարկ վճարող և ձեռքբերումների (ներմուծումների) գծով մատակարարների հարկային հաշվարկներում առանձնացված (մաքսային մարմինների կողմից գանձված) ավելացված արժեքի հարկի գումարը չի հաշվանցում: Կատարված ուսումնասիրությունները ցույց են տալիս, որ ներկայումս գյուղացիական տնտեսությունները ձեռքբերում-

ների միջոցով ավելացված արժեքի հարկի գծով կատարում են համախառն արտադրանքի արժեքի 2-3 տոկոսին համապատասխանող ծախսեր: Թռչնաբուծական և խոզաբուծական առևտրային տնտեսություններում այդ ցուցանիշը հասնում է 8-9 տոկոսի:

3.2. «Ավելացված արժեքի հարկի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի մի շարք դրույթներ գյուղատնտեսության ոլորտի վրա տարածելու պարագայում ենթակա են որոշակի փոփոխությունների: Մասնավորապես՝ օրենքի 3-րդ հոդվածով նախատեսվում է, որ. «Տնտեսական գործունեություն իրականացրած՝ անհատ ձեռնարկատեր չհանդիսացող ֆիզիկական անձինք ընթացիկ տարում համարվում են ավելացված արժեքի հարկ վճարող, եթե նրանց՝ սույն օրենքի 6-րդ հոդվածի 1-ին և 2-րդ կետերով սահմանված գործարքներից հասույթի գումարը գերազանցել է 3 միլիոն դրամը: Այդ անձինք ավելացված արժեքի հարկ հաշվարկում և վճարում են 3 միլիոն դրամը գերազանցող մասի համար»: Գյուղատնտեսության ոլորտում դեռևս հստակեցված չէ տնտեսավարող սուբյեկտների իրավական կարգավիճակը, ուստի հավասար մրցակցային պայմաններ ապահովելու նպատակով նպատակահարմար է վերոհիշյալ դրույթը տարածել գյուղատնտեսական գործունեություն իրականացնող տարբեր իրավական կարգավիճակ ունեցող բոլոր սուբյեկտների վրա:

Միաժամանակ նույն հոդվածով սահմանվում է. «Սույն օրենքի իմաստով՝ հասույթ է համարվում տնտեսական (ձեռնարկատիրական) գործունեություն իրականացնող անձանց տնտեսական (ձեռնարկատիրական) գործունեության ընդհանուր արդյունքը՝ առանց կատարված ծախսերի (այդ թվում՝ ապրանքների ձեռք բերման գծով ծախսերի) պակասեցման»:

Գյուղատնտեսական արտադրությունում ձեռնարկատիրական գործունեության ընդհանուր արդյունքը տվյալ տարվա համախառն արտադրանքն է, որի մեջ, բացի արտադրված արտադրանքի և ծառայությունների արժեքից, կարող են ներառվել նաև անավարտ արտադրության ծախսերը: Քանի որ, գյուղատնտեսական արտադրության առանձնահատկություններից մեկը կայանում է նրանում, որ արտադրված արտադրանքի մի մասը չի դրամայնացվում և օգտագործվում է ներտնտեսային (ընտանիքի անդամների պարենային ապահովում) և արտադրական (սերմեր, տնկիներ, անասնակեր, գոմաղբ և այլն) սպառման նպատակով, ուրեմն որպես հասույթ պետք է ընդունել միայն արտադրանքների իրացումից ստացվող դրամական եկամուտը:

3.3. 2006 թվականի հունվարի 1-ի դրությամբ Հայաստանի Հանրապետության Ազգային վիճակագրական ծառայության տվյալներով հաշվառված է 339174 գյուղացիական տնտեսություն և 102 գյուղատնտեսական գործունեություն իրականացնող առև-

տրային կազմակերպություն: Եթե գյուղացիական տնտեսությունները դիտարկենք որպես ֆիզիկական անձինք և հաշվարկենք հասույթի 3 միլիոն դրամ շենը գերազանցող տնտեսությունների թիվը, ապա ըստ ընտրանքային հետազոտությունների արդյունքների հիման վրա կատարված կանխատեսումների՝ 2009 թվականի հունվարի 1-ից ավելացված արժեքի հարկով հարկմանը ենթակա են մոտ 17 հազար տնտեսություն: Նկատի ունենալով, որ ներկայումս հանրապետությունում ավելացված արժեքի հարկով հարկվող սուբյեկտները մոտ 28 հազար են, ապա հարկային վարչարարության առումով աշխարհագրական մեծ տեղաբաշխվածություն ունեցող ևս 17 հազար սուբյեկտների ավելացումը հարկային ծառայության համար լուրջ դժվարություններ է ստեղծելու:

3.4. Կարևորելով Հայաստանի Հանրապետության օրենսդրությունը Եվրամիության համապատասխան իրավական ակտերին մոտարկելու գործընթացը՝ ուսումնասիրվել է Եվրամիության և Տնտեսական համագործակցության և զարգացման կազմակերպության երկրների փորձը: Ընդհանրացված ձևով այդ ուսումնասիրությունը հանգեցրել է հետևյալ հետևությունների.

ա) անհրաժեշտ է օրենսդրական կարգով հստակեցնել գյուղատնտեսական գործունեություն իրականացնող սուբյեկտների իրավական կարգավիճակը, մասնավորապես՝ «գյուղացիական տնտեսություն», «ֆերմերային տնտեսություն», «ագարակային տնտեսություն», «գյուղատնտեսական կոոպերատիվ», «գյուղացի», «ագարակատեր», «գյուղատնտեսական արտադրող» և այլ հասկացությունները պետք է տարանջատել ու սահմանել պատշաճ կարգավիճակ: Վերջինս անհրաժեշտ է ոչ միայն հարկման, այլև հասցեական սուբսիդավորման առումով:

բ) ավելացված արժեքի հարկով հարկելիս օգտագործվում են հետևյալ մոտեցումները.

- ավելացված արժեքի հարկի նվազեցված կամ տարբերակված դրույքաչափերի կիրառում՝ կախված հարկվող սուբյեկտների իրավական կարգավիճակից և աշխարհագրական դիրքից (Եվրամիության երկրներում ավելացված արժեքի հարկի սահմանված դրույքաչափերը բերվում են 1-ին աղյուսակում),
- ավելացված արժեքի հարկի չհարկվող շենի բարձրացում և տարբերակում՝ կախված հարկվող սուբյեկտների իրավական կարգավիճակից և աշխարհագրական դիրքից,
- վարչարարական արտոնություններ, որոնք զուգակցվում են, այսպես կոչված «Հաստատագրված դրույքաչափի համակարգի» հետ: Հաստատագրված դրույքաչափի համակարգի կիրառման պարագայում հարկատուն ազատվում է հաշիվներ վարելու և հաշվետվություններ ներկայացնելու պարտավորությունից,

- հատուկ արտոնություններ գյուղատնտեսական արտադրության մեջ օգտագործվող ներդրանքների (ռոռզման ջուր, վառելանյութ, պարարտանյութեր, թունաքիմիկատներ, սերմեր, տնկիներ, անասնաբուժական միջոցներ և այլն) ձեռք բերելու համար,
- ավելացված արժեքի հարկի վճարումների համար ավելի երկար ժամկետի սահմանում, որը պայմանավորված է գյուղատնտեսական արտադրության պարբերաշրջանի երկար տևողությամբ և կանխիկ գումարի սղությամբ,
- գյուղատնտեսական արտադրանքի առաջնային արտադրողները հարկվում են ավելացված արժեքի հարկի առանձին դրույքաչափով, որը մոտավորապես հավասար է (որպես ներդրանքի գնի մեջ պարունակվող ավելացված արժեքի հարկի մասնաբաժին) այն դրույքաչափին, որի կիրառմամբ նրանք ավելացված արժեքի հարկ են վճարել իրենց մատակարարներին:

Կատարված ուսումնասիրությունները ցույց են տալիս, որ միջազգային պրակտիկայում գյուղատնտեսության հարկման կատարյալ կառուցակարգեր առկա չեն և այս պարագայում որևէ տարբերակին նախապատվություն տալիս պետք է հաշվի առնել այն հանգամանքը, թե այն ինչպիսի ազդեցություն կարող է ունենալ գյուղատնտեսական արտադրանքի ներքին գների և արտադրողների գործունեության վրա:

Ինչ վերաբերվում է Անկախ պետությունների համագործակցության անդամ երկրներում գյուղատնտեսության ավելացված արժեքի հարկով հարկմանը, ապա այդ երկրների գերակշիռ մեծամասնությունում գյուղատնտեսական ապրանք արտադրողները շարունակում են որևէ կառուցակարգով (ուղղակի արտոնության տրամադրում, առանձնահատուկ չհարկվող շեմի առկայություն և այլն) ազատված լինել ավելացված արժեքի հարկից, սակայն, ի տարբերություն Հայաստանի Հանրապետության, նշված երկրների օրենսդրությամբ հիմնականում սահմանված է «գյուղատնտեսական արտադրող» հասկացությունը:

4. Հայաստանի Հանրապետությունում գյուղատնտեսության մեջ ավելացված արժեքի հարկի կանոնակարգումը

Գյուղատնտեսական արտադրանքների իրացումից ավելացված արժեքի հարկի արտոնության վերացումը պահանջում է նոր մոտեցումներ և կառուցակարգեր: Հակառակ պարագայում այդ միջոցառման հետևանքով կառաջանան մի շարք հիմնախնդիրներ: Մասնավորապես այն կհանգեցնի.

- գյուղացիական տնտեսությունների վերարտադրողական կարողությունների նվազման,

- գյուղատնտեսության ապրանքայնության մակարդակի և գյուղացիական տնտեսությունների եկամուտների կրճատման,
- ներքին և արտաքին շուկաներում գյուղատնտեսական արտադրությամբ զբաղվող տնտեսվարող սուբյեկտների մրցունակության թուլացման,
- հարկային վարչարարության բարդության, քանի որ ավելացված արժեքի հարկի արտոնության համատարած վերացումը, իրականացման տեսանկյունից գործնականորեն անհնար է՝ հաշվի առնելով տնտեսվարող սուբյեկտների մեծ քանակությունը:

Վերոշարադրյալից ելնելով՝ առաջարկվում է գյուղատնտեսության ոլորտում ավելացված արժեքի հարկի կարգավորման հետևյալ ուղղությունները.

ա) բարձրացնել գյուղատնտեսական գործունեություն իրականացնող տնտեսավարող սուբյեկտների ավելացված արժեքի հարկով չհարկվող շեմը:

Եթե գյուղացիական տնտեսությունների համար ավելացված արժեքի հարկի վճարման ստորին շեմ պահպանվի 3 միլիոն դրամ, ապա, ըստ հաշվարկների, հանրապետության գյուղացիական տնտեսությունների 5 տոկոսը կամ գրեթե 17000 գյուղացիական տնտեսություններ արդեն այսօր հատել են այդ շեմը:

Հաշվի առնելով հանրապետության գյուղատնտեսության զարգացման վերջին տարիների տեմպերը՝ 2009 թվականին 3 միլիոն դրամի շեմը կհատեն նաև ներկայումս 2-ից 3 միլիոն դրամ եկամուտ ստացող տնտեսությունները: Այսպիսով, նախնական հաշվարկները ցույց են տալիս, որ 3 միլիոն դրամ ստորին շեմի սահմանման դեպքում, 2009 թվականին պոտենցիալ ավելացված արժեքի հարկ վճարող կհամարվեն 35-40 հազար գյուղացիական տնտեսություններ: Գյուղատնտեսությունում ավելացված արժեքի հարկի արտոնության վերացման գործընթացի առաջին տարվա համար սա բավականին մեծ բազա է և իրականացման տեսանկյունից կարող է հանգեցնել լուրջ դժվարությունների:

Նպատակահարմար է, որ ավելացված արժեքի հարկի վճարման ստորին շեմը բարձրացվի մինչև 8 միլիոն դրամ: Այդ դեպքում, ըստ գնահատականի, 2009 թվականին պոտենցիալ ավելացված արժեքի հարկ վճարող կհամարվեն մոտ 3000 գյուղատնտեսական գործունեություն իրականացնող կազմակերպություններ:

բ) ավելացված արժեքի հարկի նվազեցված դրույքաչափերի սահմանում:

Նպատակահարմար է ավելացված արժեքի հարկի ներկայիս հարկվող շրջանառությունից 20 տոկոս դրույքաչափը գյուղատնտեսության ոլորտում սահմանել 10 տոկոս:

գ) ավելացված արժեքի հարկին փոխարինող պարզեցված հարկի կամ հաստատագրված վճարների կիրառում:

5. Հայեցակարգի իրականացման միջոցառումները

Սույն հայեցակարգի իրականացումը պահանջում է մեծածավալ նախապատրաստական աշխատանք, որի շրջանակներում առանձնացվում են հետևյալ միջոցառումները.

ա) «Գյուղատնտեսական կազմակերպությունների և կոոպերատիվների մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի ընդունում, որով պետք է հստակեցվի գյուղատնտեսական արտադրողների իրավական կարգավիճակը և դրանից բխող իրավահարաբերությունները: Հայաստանի Հանրապետության կառավարության այս օրենքի նախագծի ներկայացումը՝ ըստ «Հայաստանի Հանրապետության կառավարության 2006 թվականի գործունեության միջոցառումների ծրագրի և գերակա խնդիրների», նախատեսվում է 2006 թվականին դեկտեմբերի 2-րդ տասնօրյակում:

բ) «Ավելացված արժեքի հարկի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքում փոփոխություններ և լրացումներ կատարելու մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի ընդունում: Այս օրենքով պետք է սահմանվեն գյուղատնտեսական արտադրողների համար ավելացված արժեքի հարկով չհարկվող շենք, նվազեցված և տարբերակված դրույքաչափերը:

գ) «Գյուղատնտեսության և գյուղի զարգացման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի ընդունում, որով պետք է հստակեցվեն ոլորտի պետական աջակցության կայուն ուղղությունները և գյուղատնտեսության սուբսիդավորման հետ կապված իրավահարաբերությունները:

դ) «Գյուղատնտեսության համատարած հաշվառման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի ընդունում և 2007 թվականին կամ 2008 թվականին համատարած հաշվառման անցկացում: Օրենքի նախագիծը ըստ «Հայաստանի Հանրապետության կառավարության 2006 թվականի գործունեության միջոցառումների ծրագրի և գերակա խնդիրների» պետք է ներկայացվի 2006 թվականի դեկտեմբերի 2-րդ տասնօրյակում:

ե) Հարկային մարմինների կողմից պոտենցիալ հարկատուների հաշվառում:

զ) Գյուղատնտեսական արտադրողների համար տեղեկատվական, խորհրդատվական և ուսուցման ծրագրերի իրականացում:

6. Հայեցակարգի իրականացումից ակնկալվող արդյունքները

Սույն հայեցակարգի իրականացումը կապահովի հետևյալ արդյունքները.

- ավելացված արժեքի հարկի հարկման բազայի և պետական բյուջեի եկամուտների էապես մեծացում,
- ներքին և արտաքին շուկայում գյուղատնտեսական հումք վերամշակող կազմակերպությունների մրցունակության բարձրացում,
- գյուղատնտեսական արտադրության համար անհրաժեշտ ներդրանքների դիմաց վճարված ավելացված արժեքի հարկի հաշվանցում,
- Առևտրի համաշխարհային կազմակերպությանն անդամակցության Հայաստանի Հանրապետության պարտավորությունների կատարմանը զուգընթաց՝ գյուղատնտեսական արտադրողների հարկային բեռի թեթևացում,
- գյուղատնտեսության ոլորտի օրենսդրական հիմքերի բարելավում:

**Եվրամիության երկրներում 2006 թվականի փետրվարի 1-ի դրությամբ գործող՝
ավելացված արժեքի հարկի դրույթաչափերը**

Եվրամիության անդամ երկիրը	Գերնվազեցված դրույթաչափը	Նվազեցված դրույթաչափը	Սովորական դրույթաչափը
Բելգիա	-	6	21
Չեխիա	-	5	19
Դանիա	-	-	25
Գերմանիա	-	7	16
Էստոնիա	-	5	18
Հունաստան	4.5	9	19
Իսպանիա	4	7	16
Ֆրանսիա	2.1	5.5	19.6
Իռլանդիա	4.4	13.5	21
Իտալիա	4	10	20
Կիպրոս	-	5/8	15
Լատվիա	-	5	18
Լիտվա	-	5/9	18
Լյուքսեմբուրգ	3	6	15
Հունգարիա	-	5/15	20
Մալթա	-	5	18
Նիդեռլանդներ	-	6	19
Ավստրիա	-	10	20
Լեհաստան	3	7	22
Պորտուգալիա	-	5/12	21
Սլովենիա	-	8.5	20
Սլովակիա	-	-	19
Ֆինլանդիա	-	8/17	22
Շվեդիա	-	6/12	25
Մեծ Բրիտանիայի և Հյուսիսային Իռլանդիայի Միացյալ Թագավորություն	-	5	17.5